ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում առաջին, դիտնականօրէն կանոնաւոր, միօրեայ ժողովրդագրութիւն կատարուեց միայն 1897 թուականի յունուարի 28-ին։ Այդ ժողովրդագրութեամբ դեռ չի որոշուած բնակիչների բաժանումը ըստ դաւանութեան և ազգութեան. հետեւաբար, ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ հայերիս մասին գոյութիւն չունի։ Այդ է պատճառը, որ «Кавказскій Календарь»-ը տարէցտարի անփոփոխ տպում է 1886 թուին կազմուած ոչ-ճիշտ թուերը Կովկասի բնակիչների մասին՝ ըստ կրօնի և ազգութեան բաժանման։

Այդ թուերին նայած 1886 թուականին հայ-լուսաւորչականների թիւը հետեւեալն էր.

Հիւս. Կովկասում .	31,707
Անդրկովկասում .	932,275
Ընդամենը .	963,982

Իսկ հայ-կաթոլիկների թիւը Անդրկովկասում—32,692։

Նոյն «Кавк. Кал.»-ում, նոյն 1886 թուականի տեղեկութիւնների վրայ հիմնուելով, բոլոր հայերի թիւը, առանց բաժանելու դաւանութիւնների, ցոյց է տուած 970,656. մինչդեռ գումարելով նոյն դրքում բերուած հէնց միայն լուսաւորչական և կաթոլիկ հայերի թիւը, առանց բողոքականների, գումարը պէտք է լինէր 963,982+32,692=996,674։ Իսկ եթէ դրան աւելացնենք հայ-բողոքականների մօտաւորական թիւը *) 20 հազար—ակնյայտնի կը դառնայ, որ մեծ անճշտութիւններ կան «Кавк. Календарь»-ի ցոյց տուած նաև սկզբնական թուերի մէջ։

Վերև ասածներից պարզ է, որ նոյն իսկ 1886 թուականի

---

*) Շնորհակալ կը լինենք, եթէ մեր բողոքական եղբայրները հաճէին մեզ տեղեկութիւն տալ այդ մասին։

տեղեկութիւնների հիման վրայ հայերի թիւը պէտք է լինէր 996,674+20,000 (բողոք. հայեր)=1,016,674 հոգի կամ կոլոր թուով 1,017,000։ Վիճակագրական գիտութիւնը պարզել է որ Ռուսաստանում ազգաբնակութեան իսկական յաւելումը կամ աճողութիւնը հաւասար է 1,4%։ Ուրեմն իւրաքանչիւր տարի եթէ հայերի յաւելումը լինէր 14,238 հոգի, 1886 թուականից մինչև 1900 թ., այսինքն 14 տարուայ ընթացքում, պէտք է աւելանար 14,238×14=199,332։ Աւելացնենք այդ թիւը վերև բերած մեր թուին՝ 1,017,000 կը ստանանք կոլոր թուով 1,216,000։

Այդ պէտք է լինի ամբողջ Կովկասի հայերի մօտաւոր թիւը, առանց դաւանանքի խտրութեան։

Այս տարուայ «Արարատի» մէջ տպուած է ներքին գործերի մինիստրին իւրաքանչիւր տարի էջմիածնի սինոդից ներկայացրուած տեղեկագրից մի քաղուածք, որից երեւում է որ 1900 թուականին էջմիածինը հաշուում էր ամբողջ Ռուսաստանում 1,131,474 երկու սեռի հայ-լուսաւորչականներ։ Եթէ այդ թուից հանենք Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիայի թեմի 17,660 հոգին և Աստրախանի թեմի 12,204 հոգին (չը հաշուած Հիւս. Կովկասում—Ստաւրօպոլի, Թերեքի, Կուբանի և Դաղստանի շրջանների վիճակների մէջ հաշուած 26,797 հ.), այսինքն Կովկասից դուրս գտնուած ընդամենը 29,864 լուսաւորչական հայերին, պէտք է որ, ըստ էջմիածնի տեղեկութեան, ամբողջ Կովկասում միայն հայ-լուսաւորչականները 1900 թուին լինէին 1,131,474—29,864=1,101,610 հոգի։ Մինչդեռ եթէ յաւելումը հաշուէինք միմիայն լուսաւորչականների նկատմամբ, այն ժամանակ 1886 թուականի ցոյց տուած 963,982 թիւը պիտի գառնար 1900 թուականին (յաւելումը 14 տարուայ ընթացքում 188,930) 1,152,912։

Ի հարկէ, այս բոլոր հաշիւները ենթադրական են և հեռու ճշտութիւնից, սակայն, այնուամենայնիւ պարզ է, որ միայն հայ-լուսաւորչականների թիւը Կովկասում պէտք է 1,100 հազարից մինչև 1,150 հազար լինի. իսկ վերև հաշուեցինք որ անխբաիր բոլոր հայերի թիւը Կովկասում պէտք է 1,216,000 ի մօտ լինի։

Կովկասից դուրս, Ռուսաստանի միւս մասերում, հայ-լուսաւորչականների թիւը, ինչպէս տեսանք, էջմիածինը հաշում է 29,964։ Այս առիթով աւելորդ չը լինի նկատել որ դեռ 1897 թ.-ին արժանահաւատ աղբիւրից ստացած տեղեկութիւններից ինձ յայտնի էր, որ միայն Բեսարաբիայի և Նոր-Նախիջեւանի թեմում հայ-լուսաւորչականների թիւը համարեա այդքան էր՝

29,555։ Դրան աւելացրէք Ղրիմի կաթոլիկ հայերին *) և դժուար չի լինի Ռուսաստանում, Կովկասից դուրս, հայերի թիւը 50 հազարից անց համարել։

Հետեւապէս, բոլոր հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում ենթադրաբար կարելի է ընդունել 1,216,000+50,000=1,266 հազար։

Ցամենայն դէպս, նոյն իսկ չը հաշուած թիւրքիայից Կովկաս փախած հայերին, բոլոր հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում պէտք է որ առնուազը լինի 1,200,000 և, երեւի, չա-փազանցութիւն չի լինի ընդունել մինչև 1,300 հազար։

Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

---

*) Կը խնդրէինք իմացողներից հաղորդել մեզ ճիշտ թուեր Ռուսաստանի հայ-կաթոլիկների մասին։